ԺԴ.00.17 - ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Հանրային առողջությունը որպես գիտություն, նրա մեթոդաբանական հիմունքները: Հանրային առողջության տեղը և դերը բժշկական և հասարակական գիտությունների մեջ: Սոցիալ-հիգիենիկ հետազոտությունների մեթոդները: Առողջության հասկացողությունը, անհատի և հանրության առողջությունը, առողջության հասկացության նոր գաղափարախոսությունը: Համակարգային մոտեցման կիրառումն առողջապահության մեջ: Համայնքային մոտեցումը հանրային առողջության մեջ:

Հանրային առողջության զարգացման հիմնական փուլերը:

Առողջության և հիվանդության կենսաբանական և սոցիալական ասպեկտները: Բնակչության առողջության սոցիալական և կենսաբանական օրինաչափությունները: Սոցիալական պայմաններ և սոցիալական գործոններ: Սոցիալական գործոնների և ապրելակերպի ազդեցությունը մարդկանց առողջության վրա: Ուրբանիզացիան որպես սոցիալական հիմնախնդիր: Աշխատանքը որպես սոցիալ-հիգիենիկ խնդիր և մարդու կենսական պահանջ: Հանգիստը, կենցաղը և սննուդը որպես սոցիալ-հիգիենիկ հիմնախնդիր: Առողջապահության կազմակերպումը տարբեր երկրներում: Առողջապահության կազմակերպման հիմնական սկզբունքները ԱՊՀ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում: Առողջապահության կազմակերպման առանձնահատկությունները զարգացած երկրներում: Առողջապահության կազմակերպումը զարգացող երկրներում: Միջազգային համագործակցություն առողջապահության ոլորտում: Առողջապահության Համաշխարհային Կազմակերպություն (ԱՀԿ), կառուցվածքը, գործառույթները, նշանակությունը:

ԲԺՇԿԱԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վիճակագրությունը որպես գիտություն: Բժշկակենսաբանական վիճակագրություն՝ խնդիրները և հիմնական ճյուղերը (առողջապահության, բժշկական, սանիտարական վիճակագրություն):
Վիճակագրական հետազոտությունների կազմակերպում, հիմնական փուլերը: Վիճակագրական գործիքների հնարավորությունները, նշանակությունը, դրանց առանձնահատկությունները և ընտրության սկզբունքները:
Հետազոտությունների կառուցվածք (դիզայն)՝ դիտական և փորձարարական հետազոտություններ: Դիտական հետազոտություններ՝ դեպքի/ դեպքերի սերիայի նկարագիր, դեպք-ստուգիչ, հատույթային (լայնակի), կոհորտային (երկայնակի) հետազոտություններ: Փորձարարական հետազոտություններ՝ առանց ստուգիչ խմբի, արտաքին ստուգիչ խմբով, ստուգիչ խմբի հետագա դիտումով, զուգահեռ ստուգիչ խմբով:
Հավանակության տեսության հիմունքները, հիմնական օրենքները, հավաստի և անհավանական պատահույթ, համատեղելի և անհամատեղելի պատահույթներ, անկախություն և անհամատեղելիություն:
Նկարագրական վիճակագրություն՝ փոփոխականների տեսակներ, չափման սանդղակներ՝ նոմինալների, կարգային, միջակայքների և հարաբերությունների սանդղակներ: Փոփոխականների բաշխման տեսակները՝ այլընտրանքային, սիմետրիկ, ասիմետրիկ բաշխում, բինոմալ, Պուասոնի բաշխում:
Հարաբերական մեծություններ: Հարաբերական ռիսկի և շանսերի հարաբերության վստահելիության սահմաններ: Ցուցանիշների ստանդարտացում՝ ուղղակի և անուղղակի մեթոդներ: Դինամիկ շարքի վերլուծություն՝ բացարձակ աճ, աճի տեմպ, բացարձակ աճի տեմպ, հարթեցում, սողացող միջին, միջակայքի փոփոխում: Ախտորոշիչ թեստեր, վիճակագրական բնութագրեր (զգայունություն, յուրահատկություն, դրական/բացասական կանխատեսական նշանակություն): Կապա-վիճականի:
Միջին մեծություններ՝ վարիացիոն վիճակագրություն, կենտրոնական սահմանային թեորեմ: Հիմնական վիճակագրական մեծությունների (միջին թվաբանական, ստանդարտ շեղում, դիսպերսիա, ցուցանիշ, ստանդարտ սխալ)

հաշվարկ: Վիճակագրական վերլուծություն՝ z-, t-, F-թեստեր, միակողմանի, երկկողմանի կախյալ և անկախ ընտրանքների համար t-թեստ:
Ընտրանքի ծավալի որոշում մեկ և երկու խմբերի համար քանակական և որակական փոփոխականների դեպքում: Զուգորդման աղյուսակներ. Հարաբերական ռիսկեր, շանսերի հարաբերություններ, կոնտինգենցիայի, Յուլի, Չուպրովի գործակիցներ: Բազմակի համեմատություններ, դիսպերսիոն վերլուծություն: Դիսպերսիոն վերլուծության անհրաժեշտ պայմանները: Բոնֆերոնիի ուղղում, Դանետի, Տյուկիի մեթոդների կիրառումը բազմակի համեմատությունների դեպքում: Դիսպերսիոն վերլուծություն դիսպերսիաների, խմբերի անհավասարության դեպքում՝ Ուելչի, Բրաուն-Ֆորսայթի չափանիշները: Ոչ պարամետրիկ թեստեր՝ Ֆիշերի, Մակ-Նիմարի, Մանն-Ուիտնիի, Ուիլքոքսոնի: Պիրսոնի համապատասխանության գործակից: Յեթսի ուղղում: Ոչ պարամետրիկ թեստեր երկուսից ավելի խմբերի համեմատության համար՝ Կրուսկալ-Ուոլիսի, Ֆրիդմանի: Կորելյացիա՝ Սպիրմենի և Պիրսոնի եղանակներ: Բազմակի կորելյացիա, մասնակի կորելյացիա: Ռեգրեսիոն վերլուծություն: Լոգիստիկ ռեգրեսիա: Ապրելունակություն, Կապլան-Մեյերի ապրելունակության թեստ, ապրելունակության երկու կորերի համեմատություն: Վիճակագրական թեստերի ընտրությունը՝ խնդիրներին, փոփոխականների բնույթին և հետազոտության կառուցվածքին համապատասխան:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ. Բնակչության առողջության վիճակի հետազոտություն՝ տեղեկատվության աղբյուրները, ուսումնասիրության մեթոդները: Բնակչության առողջությունը բնութագրող ցուցանիշների հաշվարկի մեթոդները:

Ժողովրդագրություն. Ժողովրդագրության բժշկասոցիալական ասպեկտները: Բնակչության ստատիկա (թվաքանակ, խտություն, կառուցվածք) և դինամիկա (բնական և մեխանիկական շարժում): Բնակչության միգրա -ցիայով պայմանավորված առողջապահական խնդիրները: Ժողովրդագրության գործընթացների հիմնական միտումները ՀՀ-ում ներկա ժամանակաշրջանում: Բնակչության ծերացում՝ դրա հիմնական շարժիչ ուժերը և բժշկասոցիալական

հետևանքները: Բնակչության բնական և մեխանիկական շարժման ուսումնասիրության մեթոդիկան: Քաղաքացիական կացության փաստաթղթերի գրանցման ձևերը:

Ծնելիության և մահացության ցուցանիշները, հաշվարկի մեթոդները և գնահատումը: Ծնելիության մակարդակի վրա ազդող հիմնական գործոնները: Պտղաբերություն, ցուցանիշների հաշվում և գնահատում: Բնակչության վերարտադրությունը բնութագրող հիմնական ցուցանիշները: Մանկական մահացության ցուցանիշների հաշվում և գնահատում, մանկական մահացության պատճառները և ազդող գործոնները: Մանկական մահացության իջեցման սոցիալ-հիգիենիկ ասպեկտները:

Մայրական մահացություն՝ պատճառական կառուցվածքը, ցուցանիշների հաշվում և գնահատում: Մահացության աղյուսակներ, սպասվող կյանքի միջին տևողությունը և դրա հաշվարկի մեթոդները:

Հղիության արհեստական ընդհատումը որպես սոցիալ-հիգիենիկ հիմնախնդիր՝ տարածվածություն, պատճառներ, բժշկական և ժողովրդագրական հետևանքներ:

Բնակչության բնական աճ, ժողովրդագրական ցիկլ: Արդյունավետ ժողովրդագրական քաղաքականության անցկացման խնդիրները ՀՀ ազգաբնակչության բնական շարժի հետագա բարելավման նպատակով:

Հիվանդացություն. Հիվանդացության ուսումնասիրության դերը բնակչության առողջության վիճակի գնահատման գործում: Հիվանդությունների միջազգային դասակարգումը, պատմությունը, կառուցվածքը, նշանակությունը: Բնակչության հիվանդացության ուսումնասիրության հիմնական աղբյուրներն ու մեթոդները: Հիվանդացության ցուցանիշները, դրանց հաշվումն ու գնահատումը: Հիվանդացության ուսումնասիրությունն ըստ դիմելիության՝ ամբուլատոր-պոլիկլինիկական, հոսպիտալացված, վարակիչ, կարևոր ոչ վարակիչ հիվանդություններով: Ժամանակավոր անաշխատունակությամբ ուղեկցվող հիվանդացություն: Ախտաբանական ախտահարվածություն: Կանխարգելիչ բժշկական զննումների տեսակները: Հիվանդացության ուսումնասիրությունը մահվան պատճառների տվյալներով:

Առողջների առողջություն, ուսումնասիրությունը: Հիվանդացողների կոնտինգենտ, նրանց կյանքի պայմանների ուսումնասիրությունը:
Կարևորագույն հիվանդությունների բժշկասոցիալական ասպեկտները: Սրտանոթային համակարգի հիվանդությունները որպես բժշկասոցիալական հիմնախնդիր: Չարորակ նորագոյացությունները որպես բժշկասոցիալական հիմնախնդիր: Շաքարային դիաբետը որպես բժշկասոցիալական հիմնախնդիր: Տրավմատիզմը որպես բժշկասոցիալական հիմնախնդիր: Նյարդահոգեկան հիվանդությունները որպես բժշկասոցիալական հիմնախնդիր: Տուբերկուլյոզը որպես բժշկասոցիալական հիմնախնդիր: ՄԻԱՎ/ՁԻԱՀ որպես բժշկասոցիալական հիմնախնդիր: Վարքային խանգարումները (ծխախոտամոլություն, թմրամոլություն, ալկոհոլիզմ) որպես բժշկասոցիալական հիմնախնդիր:
Բնակչության ֆիզիկական զարգացում: Ֆիզիկական զարգացման ուսումնասիրության նշանակությունը, դիտարկման համակարգը: Ֆիզիկական զարգացման հիմնական ցուցանիշները և դրանց ուսումնասիրության մեթոդները:
Առողջապահության վիճակագրություն. Պետական վիճակագրական ծառայության կազմակերպման ընդհանուր սկզբունքները: Բժշկական հաշվառման և հաշվետվության ձևերը: Առողջապահության համակարգում հաշվետվության հիմնական փաստաթղթերը: Բուժ-կանխարգելիչ հիմնարկությունների գործունեության վերլուծությունը (պոլիկլինիկա, ստացիոնար, ծննդատուն, կանանց կոնսուլտացիա, մանկական պոլիկլինիկա և հիվանդանոց, շտապ բժշկական օգնության ծառայություն, առողջապահական պետական տեսչություն):
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՈՒԺ-ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ.
Առողջապահության մասին օրենսդրությունը: Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու մասին ՀՀ օրենքը: Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների իրավունքներն ու պարտականությունները: Բժշկական օգնությունից և սպասարկումից օգտվողների իրավունքները: Առողջապահության բնագավառի աշխատողների որակավորման բարձրացման իրավական հարցերը, մասնագիտացում և վերապատրաստում: Արտահիվանդանոցային և հիվանդանոցային բուժօգնության կազմակերպումը ՀՀ-ում: Պոլիկլինիկայի առաջատար դերը

բժշկական սպասարկման համակարգում, կառուցվածքը, աշխատանքի կազմակերպումը: Պոլիկլինիկական սպասարկման տեղամասային սկզբունքը: Ընտանեկան բժիշկի/տեղամասային թերապևտի աշխատանքի բովանդակությունը և կազմակերպումը:

Մասնագիտացված բուժօգնության կազմակերպումը պոլիկլինիկայում: Նեղ մասնագետների, ընտանեկան բժիշկների/տեղամասային թերապևտների ինտեգրումը հիվանդների բուժման և դիտարկման գործում:

Ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության բարեփոխումները ՀՀ-ում: Առաջնային բուժօգնության բնութագիրը: Ընտանեկան բժշկի ինստիտուտ, դրա դերն առողջության առաջնային պահպանման համակարգում, աշխատանքի կազմակերպման հիմնական մոդելները և առանձնահատկությունները: Քաղաքային բնակչության շտապ և անհետաձգելի բժշկական օգնության կազմակերպումը ՀՀ-ում: Ստացիոնար: Հիվանդների ընդունման և դուրս գրման կարգը: Ընդունարանի կառուցվածքը և գործունեությունը: Բժշկի և միջին բուժանձնակազմի աշխատանքի կազմակերպումը: Հիվանդանոցի մասնագիտացված բաժանմունքներ, դրանց կազմակերպման սկզբունքները, կառուցվածքը, գործունեությունը:

Հիվանդանոցներում և պոլիկլինիկաներում առողջության խթանման և քարոզչության աշխատանքի կազմակերպումը, խնդիրները, բովանդակությունը, մեթոդները և միջոցները:

Ստոմատոլոգիական ծառայության կազմակերպումը ՀՀ-ում:

Դիսպանսերային մեթոդ. Դիսպանսերային մեթոդի էությունը: Բնակչության դիսպանսերային սպասարկումը որպես բուժական և կանխարգելիչ բժշկության սինթեզի դրսևորում:

Բնակչության առանձին խմբերի դիսպանսերիզացիա, հատուկ դիսպանսերների տեսակները, դրանց կառուցվածքը, աշխատանքի մեթոդները: Դիսպանսերիզացիայի որակի և արդյունավետության ցուցանիշներ:

Մայրության և մանկության պահպանման պետական համակարգ.

ՀՀ օրենսդրությունը մայրության և մանկության պահպանման վերաբերյալ: Կառավարության հիմնական որոշումները մայրության և մանկության պահպանման ուղղությամբ: Մոր և մանկան առողջության պահպանման կազմակերպման հիմնական ուղղություններն ու խնդիրները:

Մոր և մանկան պահպանման համակարգի բժշկական հիմնարկությունները և դրանց փոխկապվածությունը: Մանկաբարձագինեկոլոգիական արտահիվանդանոցային և հիվանդանոցային բուժօգնության կազմակերպումը ՀՀ-ում: Կանանց կոնսուլտացիա: Աշխատանքի ձևերը և մեթոդները, հիմնական գործառույթները: Գինեկոլոգիական հիվանդների օգնության կազմակերպում: Պայքար հղիության արհեստական ընդհատման դեմ: Կանխարգելիչ զննումներ: Առողջ կանանց սպասարկման գործում կանանց կոնսուլտացիայի խնդիրները: Կանանց կոնսուլտացիայի կապը ծննդատան և մանկական պոլիկլինիկայի հետ: Ծննդատուն՝ կառուցվածքը և գործառույթները: Մանկական և նորածնային մահացության կանխարգելման միջոցները: Գինեկոլոգիական հիվանդների ստացիոնար օգնության կազմակերպումը: Մանկական բնակչության արտահիվանդանոցային և հիվանդանոցային բուժօգնության կազմակերպում: Մանկական պոլիկլինիկա, կառուցվածքը, խնդիրները: Առողջ և հիվանդ երեխաների սպասարկման առանձնահատկությունները: Երեխաների պոլիկլինիկական բժշկական օգնության տեղամասային սկզբունքը և դիսպանսերային մեթոդը: Վաղ մանկական տարիքի երեխաների բժշկական սպասարկման ձևերը և մեթոդները: Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների բուժ-կանխարգելիչ օգնության կազմակերպումը: Ժամանակակից պայմաններում երեխաների ստացիոնար բուժօգնության կազմակերպումը: Մանկական հիվանդանոց, կառուցվածքը, խնդիրները: Մանկական բնակչության կարևորագույն հիվանդություններն ու դրանց բժշկասոցիալական նշանակությունը:

Գյուղական բնակչության բժշկական սպասարկում. Գյուղական բնակչության առողջության պահպանման հիմնական սկզբունքները: Գյուղական բնակչության բժշկական սպասարկման առանձնահատկությունները և փուլերը: Առողջության

գյուղական կենտրոն՝ խնդիրները և կազմակերպչական կառուցվածքը: Մարզային և տարածաշրջանային հիվանդանոցներ՝ խնդիրները, կառուցվածքը և գործառույթները: Գյուղական բնակավայրում մանկաբուժական և մանկաբարձա-գինեկոլոգիական օգնության կազմակերպման առանձնահատկությունները: Գյուղական բնակչության շտապ և անհետաձգելի բժշկական օգնության կազմա-կերպումը:

Հանրապետական հիվանդանոց՝ կառուցվածքը և խնդիրները:

Հիգիենիկ և հակահամաճարակային հսկողության կազմակերպում.

Հիգիենիկ-հակահամաճարակային հսկողության կազմակերպումը ՀՀ-ում: Առողջապահական պետական տեսչություն՝ կառուցվածքը, գործունեությունը, դերը բնակչության առողջության պահպանման և հիվանդությունների կանխար-գելման գործում: Սանիտարահիգիենիկ գործունեության ուղղությունները ըստ ոլորտների: Սանիտարական բժշկի աշխատանքի մեթոդները, նրա իրավունքները և պարտականությունները: Նախազգուշական և ընթացիկ սանիտարական հսկողություն:

Հակահամաճարակային աշխատանք: Առողջապահական պետական տեսչության դերը վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի գործում: Բժիշկ համաճարակաբանի գործունեությունը և դերը:

Առողջապահական պետական տեսչության դերը շրջակա միջավայրի պահ-պանման գործում: Առողջապահական պետական տեսչության կապը բուժ-կանխարգելիչ հիմնարկությունների և պետական մարմինների հետ:

Սանիտարա-լուսավորչական աշխատանքները Առողջապահական պետական տեսչության գործունեության մեջ:

Առողջության ամրապնդում և խթանում. Առողջության լրատվության ներածություն: Առողջության, առողջության խթանման և առողջության վերաբերյալ հաղորդակցության սահմանումները: Հաղորդակցության դերը առողջության համար: Հաղորդակցության գործընթացի բաղադրիչներ, դրանց առանձնահատկությունները: Մասնակիցներ, խողովակներ, ուղերձ, հետադարձ կապ:

Առողջության վերաբերյալ տեղեկությունների աղբյուրներ, դրանց նույնականացումը, հուսալիության ու արժանահավատության գնահատման սկզբունքները: Լրատվության էլեկտրոնային աղբույրներ: E-health՝ էլեկտրոնային առողջություն: Առողջության ամրապնդում տարբեր իրավիճակներում: Առողջության ամրապնդում և հանրային շարժումների նոր տեսություն: Հանրության լիազորությունների ընդլայնում: Ուժի, իշխանության ու լիազորությունների տրանսֆորմացիա:

Իշխանության տրանսֆորմացիա և առողջության ամրապնդման պրակտիկա: Իշխանություն զրոյական և ոչ զրոյական գումարով: Իշխանության 3 կողմեր: Հանրության լիազորությունների ընդլայնում և առողջության ամրապնդման պրակտիկա: Լիազորությունների ընդլայնման երեք մակարդակներ: Առողջության ամրապնդման ծրագրերի հակասություններ և դրանց հաղթահարումը: «Վերից վար» և «վարից վեր» ուղղված առողջության ամրապնդման ծրագրեր՝ առավելություններ ու թերություններ: Սոցիալական մարքեթինգի հիմունքներ: Սոցիալական մարքեթինգի և վարքի փոփոխություն:

Քարոզարշավներ հանրային առողջության խնդիրների լուծման համար: Քարոզարշավի բնութագիրը, շահագրգիռ կողմերը: Քարոզարշավի կազմակերպում, տեսաձայնագրած նյութերի օգտագործում, զանգվածային լրատվամիջոցների հետ համագործակցում:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Առողջապահության համակարգեր՝ բաղադրիչները, խնդիրները: Առողջապահության համակարգերի մոդելները՝ համեմատական գնահատականը: Պետական առողջապահության համակարգի բնութագիրը՝ հիմնական առավելություններն ու թերությունները:

Մասնավոր-սեփականատիրական առողջապահության համակարգի բնութագիրը՝ հիմնական առավելություններն ու թերությունները:

Սոցիալական (պարտադիր) ապահովագրական առողջապահության համակարգի բնութագիրը՝ հիմնական առավելություններն ու թերությունները: Պարտադիր և կամավոր բժշկական ապահովագրության փորձը զարգացած երկրներում:

Առողջապահության ղեկավար մարմինները ՀՀ-ում: Առողջապահության նախարարության գործառույթները: Պետական առողջապահական գործակալություն (ՊԱԳ)՝ նշանակությունը, գործառույթները: Բժշկական ապահովագրության հիմնախնդիրը ՀՀ-ում:

ՊԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ՝ ԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական ապահովագրության և ապահովման սկզբունքները, նշանակությունը, կառուցվածքը և գործունեությունը:

Սոցիալական ապահովագրության և ապահովման բյուջեն, դրա կառուցվածքը: Սոցիալական ապահովագրության և ապահովման նպաստների, թոշակների և այլ վճարումների տեսակները:

Առողջապահական մարմինների և բժիշկների դերը սոցիալական ապահովագրության և ապահովման գործում:

Աշխատունակության բժշկական փորձաքննություն.

Ժամանակավոր անաշխատունակություն: Ժամանակավոր անաշխատունակության փորձաքննության կազմակերպումը ամբուլատոր-պոլիկլինիկական և ստացիոնար հիմնարկություններում: Ժամանակավոր անաշխատունակության թերթիկ՝ նշանակությունը, լրացման կանոնները:

Ժամանակավոր անաշխատունակությամբ ուղեկցվող հիվանդացության ուսումնասիրությունը: Կայուն անաշխատունակության փորձաքննություն: ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն՝ կառուցվածքը, գործառույթները: Հաշմանդամության խմբեր և դրանց որոշման սկզբունքները: Հաշմանդամների վերականգնումը, բժշկական, սոցիալական և մասնագիտական վերականգնում:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԵՆԵՋՄԵՆԹԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Հասկացություն մեթեջմենթի մասին: Մենեջմենթի զարգացման պատմությունը: Մենեջմենթի գործընթացի էությունը՝ բովանդակությունը, հատկությունները, սկզբունքները, արդյունավետ կառավարման պայմանները:

Կառավարման ցիկլը՝ փուլերը, դրանց բնութագրերը, ներկայացվող պահանջները, կիրառվող մեթոդները: Կառավարումը լոգիստիկական մոտեցման

դիրքերից: Ռիսկի պայմաններում կառավարչական որոշման ընդունման տեխնոլոգիան: Կառավարման ուղիղ, խառը, հետադարձ, օժանդակ գործառույթներ: Կառավարման կազմակերպա-կարգադրական, տնտեսագիտական, սոցիալ-հոգեբանական, իրավական մեթոդները: Կառավարում շուկայական պայմաններում՝ մենեջմենթն առողջապահությունում, մարքեթինգը որպես ներֆիրմային կառավարման գործառույթ: Առողջապահության կազմակերպություններում կառավարման համակարգերի ձևավորումը՝ կառավարման կառուցվածքների ձևավորման ձևերն ու սկզբունքները, մենեջմենթի աշխատանքային գործընթացների դասակարգումը, կառավարման տարբերակված խմբերի առանձնացումը: Կազմակերպություններ: Հիմնական մոտեցումներ կազմակերպությունների ուսումնասիրության նկատմամբ: Ժամանակակից կազմակերպությունների էությունը և բնույթը: Բախում հասկացությունը: Բախումները կազմակերպություններում: Բախումների կարգավորում: Առաջատարություն և թիմային աշխատանք: Առողջապահական ծրագրերի կառավարում, արդյունավետության գնահատում:

Բժշկական անձնակազմի կառավարում՝ կադրային քաղաքականության մշակում: Անձնակազմի կառավարման ռազմավարության մշակում: Կազմակերպության անձնակազմի հետ աշխատանքի պլանավորում: Բժշկական անձնակազմի կառավարման տեխնոլոգիայի մշակումն ու իրականացումը՝ կադրային ծառայության կազմակերպումն ու նրա գործունեության կանոնակարգումը: Կադրերի կառավարման համակարգի գնահատումն ու կատարելագործումը: Բուժկանխարգելիչ կազմակերպությունների ֆինանսական միջոցներն ու դրանց կառավարումը, ֆինանսական ռիսկի իջեցման մեխանիզմները առող-ջապահությունում:

Բուժօգնության որակի կառավարում. Բուժօգնության որակը, որակի ապահովման համակարգը: Ա. Դոնաբեդյանի որակի գնահատման եռկոմ-պոնենտային մոդելը: Բժկական օգնության որակի գնահատման մասնակիցները: Բժշկական օգնության որակի կառավարման հիմունքները՝ հիմնական հասկացությունները և եզրույթները: Բժշկական ստանդարտներ՝ նշանակությունը

և ձևերը: Որակի կառավարման համակարգի կառուցման սկզբունքները ISO ստանդարտներում: Որակի վերահսկման տեխնոլոգիաներ: Հիվանդների ախտորոշման և բուժման որակի վերահսկման ձևերը և մեթոդները:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ. **Առողջապահության տնտեսագիտություն**. Առողջապահության դերն ու նշանակությունը ժողովրդական տնտեսության զարգացման մեջ: Առողջապահության տնտեսագիտություն՝ նպատակները, հիմնախնդիրները, առանձնահատկությունները: Առողջապահության զարգացման տնտեսագիտական հիմունքները: Շուկայական հարաբերությունները առողջապահության ոլորտում: Արդյունավետության ձևերը առողջապահության մեջ՝ բժշկական, սոցիալական, տնտեսական: Առողջապահության տնտեսական արդյունավետության հասկացությունը: Հիվանդություններից առաջացած տնտեսական վնասը (ուղղակի, անուղղակի): Կանխված վնասը, բժշկական ծրագրերի տնտեսական արդյունավետությունը: Առողջապահության նյութատեխնիկական բազան, հիմնական տարրերը: Առողջապահության նյութատեխնիկական բազայի ընդլայնման և ամրապնդման խնդիրները: Առողջապահական համակարգի գործունեության տնտեսագիտական վերլուծության իմաստն ու խնդիրները: Առողջապահական հիմնարկություններում աշխատանքի նորմավորումը և վարձատրման հիմնական մեթոդները: Առողջապահական հիմնարկությունների տնտեսական գործունեության հաշվառում և վերլուծություն, վերլուծության մեթոդներ:

Առողջապահության ֆինանսավորում. Առողջապահության ֆինանսավորման հիմունքները, ֆինանսավորման աղբյուրները ՀՀ-ում: Բժշկական ծառայությունների վճարման ձևերը՝ բյուջետային, ռետրոսպեկտիվ, պրոսպեկտիվ: Բժշկական ծառայությունների գնագոյացման սկզբունքները, մեխանիզմները, տեսակները: **Առողջապահության պլանավորում**. Պլանավորում՝ նշանակությունը, սկզբունքները, տեսական հիմունքները: Պլանավորման հիմնական մեթոդները շուկայական տնտեսավարման պայմաններում: Առողջապահության պլանավորման ձևերն ու մեթոդները: Առողջապահության զար-

գացման ընթացիկ և նպատակային պլաններ: Տարածքա-ճյուղային պլաններ: Առողջապահության զարգացման կարևորագույն ցուցանիշները: Ամբուլատոր-պոլիկլինիկական և ստացիոնարային բժշկական օգնության պլանավորումը: Գիտահետազոտական աշխատանքների պլանավորումը ՀՀ-ում: Ժամանակակից տնտեսա-մաթեմատիկական մեթոդների, հաշվողական տեխնիկայի կիրառումը առողջապահության պլանավորման գործում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Зайцев В.М., Лифляндский В.Г., Маринкин В.И. "Прикладная медицинская статистика". Санкт-Петербург, 2006.
2. Կենսաբանական վիճակագրության հիմունքները. Ուսումնական ձեռնարկ պրոֆ. Ա.Կ. Հայրապետյանի խմբ. ԵՊԲՀ, Երևան, 2010թ.:
3. Хачатрян Т.С., Лепян М.К., Тоноян Т.З., Андриасян Л.В. Управление, экономика и финансирование здравоохранения в условиях рыночных отношений. Учебное пособие. Ереван, 2002.
4. Тоноян Т.З., Лепян М.К., Арутюнян Г.К. Экономика здравоохранения. Учебник. Ереван, 2004.
5. Технология управления учреждениями здравоохранения. Руководство для профессионального образования. Под редакцией Гусевой Н.К. Нижний Новгород, 2009.
6. Лисицын Ю. П. Общественное здоровье и здравоохранение. Москва, "ГЭОТАР-Медиа", 2007.
7. Лукашев А.М., Прохоров Б.Б., Шиленко Ю.В. "Общественное здоровье и управление здравоохранением", М., "Оверлей", 2005.392 с.
8. ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), 27.11.2005թ.:
9. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբան. Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի. Ե. Իրավունք, 2010, 1086 էջ:
10. ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, ՀՕ-124-Ն, 09.11.2004թ.:
11. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, ՀՕ-239, 05.05.1998թ.:
12. ՀՀ Քրեական օրենսգիրք, ՀՕ-528, 18.04.2003թ.:
13. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, 06.12.1985թ.:
14. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք, ՀՕ-42, 04.03.1996թ.:
15. «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք, ՀՕ-43, 12.12.1992թ.:
16. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք, ՀՕ-193, 30.05.2001թ.:

17. «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենք, ՀՕ-474-Ն, 11.12.2002թ.:
18. «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-80-Ն, 25.05. 2004թ.:
19. «Մարդուն օրգաններ և/կամ հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենք, ՀՕ-324, 16.04.2002թ.:
20. Մարդու և քաղաքացու իրավունքների ֆրանսիական հռչակագիր, 1789թ.:
21. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 1948թ.:
22. Մարդու տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր, 1966թ.:
23. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա, 1950թ.:
24. Քաղաքական և քաղաքացիական իրավունքների վերաբերյալ միջազգային դաշնագիր, 1966թ.:
25. Պացիենտի իրավունքների մասին լիսաբոնյան հռչակագիր, 1981թ.
26. Եվրոպայում պացիենտի իրավունքների ապահովման քաղաքականության մասին դեկլարացիա, 1994թ.:
27. Եվրոպական սոցիալական խարտիա, 1961թ.:
28. Лаверак Г. Укрепление здоровья и расширение возможностей. Бишкек, 2011, 204 с.
29. Theory at a glance. A guide for health promotion practice. Second edition. US Department of Health and Human Services. National Institute of Health.
30. What is Social Marketing? NHS, Department of Health.
31. Rayner M. Social marketing: how might this contribute to tackling obesity? Obesity reviews. (2007) 8 (Suppl. 1), 195–199.